ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(առարկա)

ԹԵՄԱ - Հետազոտահեն ուսուցումը որպես պատմական մտածողության խթան

Կազմեց՝ Մերի Մարտիրոսյան Վոլոդյայի
(անուն, ազգանուն, հայրանուն)

<<Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լիլիթ Առաքելյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1- Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը, պատմական ակնարկ

Գլուխ 2- Հետազոտահեն ուսուցման իմ փորձը

Հավելված - Նյութական մշակութային ժառանգության ուսումնասիրության համար հուշարձանի ուսումնասիրության ներկայացման ձևաչափ, լուսանկարներ , վիմագիր արձանագրությունների վերծանություններ, հատակագծեր

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

«Ասա՛ ինձ , և ես կմոռանամ, ցու՛յց տուր ինձ, և ես կհիշեմ, մասնակի՛ց դարձրու, և ես կհասկանամ» (Կոնֆուցիոս):

Ներածություն

Սովորողների հետազոտական կարողությունների զարգացման խնդիրն ունի արդիական մանկավարժական հնչեղություն, որի լուծման ուղիներից է հետազոտահեն ուսուցումը: Հետազոտական աշխատանքում ներկայացված են հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը, հայ և օտարազգի գիտնականների, մանկավարժների գաղափարները՝ կարևորելով սովորողների ինքնուրույն գործունեությունը, իմ մանկավարժական փորձը:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման ծրագրի չորրորդ նպատակը վերաբերում է որակյալ կրթության հասանելիությանը՝ նախանշելով մինչև 2030 թ. «խթանել որակյալ ցկյանս ուսումնառության հնարավորությունները բոլորի համար, բոլոր միջավայրերում և կրթության բոլոր մակարդակներում»:[1]

Որակյալ կրթության ապահովման ուղիներից է երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան ուսուցման կազմակերպումը, նրանց փորձարարության խթանումը: Քսանմեկերորդ դարում տեղի ունեցող արագ փոփոխությունների և հսկայածավալ տեղեկույթի ստեղծման և կուտակման պայմաններում այսօր կարևորվում է սովորողների ինքնուրույն ստեղծագործական գործունեության և ցկյանս ուսումնառության նախապատրաստումը, որտեղ առանցքային դեր ունի հետազոտական կարողությունների զարգացումը:

Հետազոտահեն ուսուցումը նպաստում է պատմական մտածողության զարգացմանը և շատ կիրառելի է պատմության դասավանդման ընթացքում:

[1] Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր 2/2021, Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը, էջ 105

Գլուխ 1

Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը, պատմական ակնարկ

Հայ մանկավարժները վաղ միջնադարից սկսած որոշ քայլեր են կատարել ուսուցման գործընթացում դիտազննական, ցուցադրական և փորձառական մեթոդների ներմուծման ուղղությամբ: Դեռևս 5-րդ դարում Եզնիկ Կողբացին հանդես է եկել որպես փորձի միջոցով ուսուցման սկզբունքի ջատագով՝ քննադատելով Պյութագորասի «հնգամյան լռության» մեթոդը: Դավիթ Անհաղթը (5-6-րդ դարեր) կարևորել է ինքնուրույն ուսումնառությունը, խորհմացությունը, տրամաբանական մտածելակերպը: Նա ճանաչողական ընդունակությունների մեջ ներառում է զգայությունները, երևակայությունը, կարծիքը, տրամախոհությունը և միտքը (բանականությունը) [2]:

Ա.Շիրակացին (7-րդ դար), Գ.Մագիստրոսը (11-րդ դար), Հ. Սարկավագը (11-12-րդ դար) խրախուսում էին մրցակցության և ակտիվ ուսուցան մեթոդները, նշում մարդու բոլոր զգայարանների ակտիվ մասնակցության առավելությունները[3] :

Ուսուցման մեջ փորձի կիրառմանը մեծ գնահատական է տվել Հովհաննես Սարկավագը 11-րդ դարում՝ այն համարելով ամեն «բան ճշմարտելու» լավագույն ուղին և «խօլ հանճար՝ անհանճարիցն» համարելով այն գիտնականներին, որոնք չեն կիրառում փորձերը գիտելիքների ձեռքբերման գործընթացում: Աբեղյանը և Լ. Ալիշանը ոգեշնչվելով, Սարկավագի աշխատություններով, նկատել են Սարկավագի աշխատանքների նորարարական առավելությունները նրա ժամանակակից եվրոպացիների նկատմամբ:

Ալիշանն էլ մեջբերում է Սարկավագին՝ ընդգծելով. «Դարձյալ թե և սորոք կիրթ և վարժ, առանց փորձի՝ կարծիքն հավատարմանալ ոչ կարասցեն. և փորձ՝ հաստատուն և աներկբա... վասն զի ոչ է պարտ միայն հնագիտակ (հին բաներ իմացող) լինել այլ և ինքնաբաւ (ինքն իրեն բավական, ուրիշի անկարոտ) ըստ շնորհացն Աստուծոյ»[4] :

Եսայի Նչեցին ինքնակրթությունը համարում էր կարևորագույն միջոց և խրախուսում ուսանողների ինքնուրույն աշխատանքները, իսկ Հովհան Որոտնեցին դպրոցական

---

[2] Դավիթ Անհաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք/ Համավահավաք քննաան բնագրեր և առաջաբանը Ս.Ս. Արևշատյանի, խմբ. Գ.Հ. Գրիգորյան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, էջ 10-11

[3] Մովսիսյան Ա.Խ., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10-15 րդ դարեր), Եր., Հայպետուսմանկհրատ, 1958,էջ 388

[4] Նույն տեղում, էջ 388-390

ծրագրերում կրոնական բնույթ ունեցող առարկաներից բացի ներառեց աշխարհիկ կյանքի պահանջները բավարարող, գործնական առարկաներ՝ շաղկապելով ուսուցումն իրական կյանքի հետ [5] :

Մշո Սուրբ Կարապետ վանքին կից 1860 թ-ին ստեղծված «ժառանգավորաց» վարժարանում աստվածաբանությունից բացի Մ.Խրիմյանն իրականացնում էր փորձարարական աշխատանքների ճանապարհով բնական գիտությունների դասավանդում, էքսկուրսիաներ բնության գրկում [6]:

Սովորողների ինքնուրույն – որոնողական գործունեության ճանապարհով ուսումնառությունը խրախուսվում է նաև այլ պետություններում: Օրինակ՝ Ճապոնիայում լայնորեն շրջանառվում էր «Ուսուցի՞չ, մի՞ խանգարիր աշակերտին սովորելիս» դրույթը: [7]

Շվեյցարացի ականավոր մանկավարժ Ի.Հ. Պեստալոցցին (1746-1827 թթ.) առաջնորդվում էր «Հետազոտենք ամբողջը, պահպանենք լավագույնը» սկզբունքով: Ն.Մ. Սկատկինը նկատում էր. «Ուսուցիչն աշակերտների առաջ ցուցադրում է հենց գիտական մտածողության ուղին, ստիպում է աշակերտներին հետևել մտքի՝ դեպի ճշմարտությունն ընթացող դիալեկտիկական շարժմանը՝ ասել է թե՝ նրանց դարձնելով գիտական պրպտումների մասնակից»[8]:

Սովորողների ինքնուրույն ուսումնառության և հետազոտական գործունեության անհրաժեշտության մասին նշել է դեռևս Յ.Ա. Կոմենսկին՝ իր «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ գրելով, որ «ուսուցումը պետք է լինի հիմնավոր, այսինքն՝ այնպես պետք է ուսուցանել, որ սովորողը կարողանա հասկանալ խնդրի իմաստն ու վիճակը, ըմբռնի նրանց փոխադարձ պայմանավորվածությունը, կոնկրետ երևույթների մեջ տեսնի ընդհանուրը և մասնակին» [9] :

---

[5] Սիմոնյան Ց. Ռ., Հայ մանկավարժության պատմություն, Եր., Մանկավարժ, 2006, էջ 42

[6] Դայան Ս.Ծ., Աշխարհագրական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունները Արևմտյան Հայաստանի դպրոցներում 19-րդ դարի 2-րդ կեսին, Ատենախոսություն, Եր., 2012, էջ 76

[7] Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր 2/2021, Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը, էջ 107

[8] Սարգսյան Ա.Մ., Մանկավարժական տեխնոլոգիաների կիրառությունը որպես մաթեմատիկայի դասավանդման արդյունավետության բարձրացման գործոն, Եր., 2008,էջ 16-17

[9] Կոմենսկի Յ.Ա., Մեծ դիդակտիկա, Եր., «Զանգակ97», 2010, 432 էջ: 10. Կոնստանտինով Ն.Ա., Մեդինսկի Ե.Ն., Շաբաևա Մ.Ֆ., Մանկավարժության պատմություն, դասագիրք մանկավարժական ինստիտուտների համար, Եր., «Լույս», 1972, էջ 2

Կոմենսկու ուսուցման «Ոսկե կանոնը» հետազոտելով սովորելուն ուղղված ամենահիմնավոր սահմանումն էր, որը հաստատում էր, որ որևէ երևույթ ճանաչելու համար պիտի այն «տնտղել» բոլոր զգայարաններով [10]:

Ժ.Ժ. Ռուսոն ուսուցման գործում առաջնորդվում էր երեխային ինքնուրույն և ընտրության հնարավորություն տալով: Պեստալոցցին ևս խրախուսում է երեխայի ինքնուրույն գործունեությունը՝ առաջարկելով, որ «երեխայի մեջ պետք է զարգացնել ինքնուրույն տեսելու, լսելու, ամեն ինչ ինքնուրույն կատարելու, դատելու ունակություններ»: [11]

Սոկրատյան մեթոդին իր զորակցությունն է հայտնել Դիստերվեգը՝ ընդգրկելով դասավանդման զարգացնող- շարադրական եղանակի մեջ, որի դեպքում երեխաները հանդես են գալիս որպես հետազոտողներ, գործում են ինքնուրույն. «Ամեն մի ճշմարիտ իմացություն ստացվում է զննողաբար սովորելուց»[12] :

Ռուս մանկավարժ Կ.Դ. Ուշինսկին հետազոտական գործունեության ճանապարհով սովորելու կարևորությունը հիմնավորում է նրանով, որ այս դեպքում ուսուցիչը չի սովորեցնում աշակերտին. նա միայն օգնում է նրան և ցույց տալիս՝ ինչպես պետք է սովորել: Նա խորհուրդ էր տալիս կիրառել սոկրատյան մեթոդը՝ հարցերի միջոցով առաջադրելով մտքերի և փաստերի հակասություններ, որոնք ստիպում են մասնակիցներին՝ միմյանց հետ բանավիճելու, միմյանց քննադատելու, արդարանալու և պաշտպանելու սեփական իրավացիությունը[13] :

Անառարկելի է, որ հետազոտական աշխատանքների իրականացման խթանը հետազոտության թեմայի և հարցի նկատմամբ երեխայի հետաքրքրասիրությունն է՝ զարմանքը: Հետաքրքրությունների ոլորտներն ու բնույթը տարբերվում են՝ պայմանավորված երեխայի տարիքային առանձնահատկություններով: Այսպիսով՝ հետազոտահեն կրթության կազմակերպումը սովորողներից պահանջում է ինքնուրույնության բարձր մակարդակ, ինքնակառավարման և հետազոտական զարգացած հմտություններ հետազոտության բոլոր փուլերում:

Գլուխ 2

[10] Կոմենսկի Յ.Ա., Մեծ դիդակտիկա, Եր., «Զանգակ97», 2010, 432 էջ: 10. Կոնստանտինով Ն.Ա., Մեդինսկի Ե.Ն., Շաբաևա Մ.Ֆ., Մանկավարժության պատմություն, դասագիրք մանկավարժական ինստիտուտների համար, Եր., «Լույս», 1972, էջ 27

[11] Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր 2/2021, Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը, էջ 108

[12] Դիստերվեգ Ա., Մանկավարժական ընտիր երկեր, - Եր.: «Հայպետուսմանկհրատ», 1963,էջ 216

[13] Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, - Եր., «Հայպետհրատ», 1949, էջ 239-240

Հետազոտահեն ուսուցման իմ փորձը

Հետազոտական աշխատանքների նկատմամբ պահանջմունքը պայմանավորված է երեխայի բնույթով: Չէ՞ որ երեխան ի ծնե հետազոտող է:

Հետազոտությունների նկատմամբ հակում ունեն բացառապես բոլոր երեխաները: Նոր տպավորությունների անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, փորձ անելու և ճշմարտությունն ինքնուրույն բացահայտելու մշտական ձգտումը հատուկ է վառ երևակայությամբ օժտված և էներգիայով լեցուն երեխաներին: Ուստի ուսուցչից պահանջվում է այդ էներգիան ուղղորդել երեխաների այդ մեծ նպատակի իրականացմանը:

Հետազոտական գործունեությունն անձի ակտիվ ստեղծագործական վերաբերմունքն է շրջապատող աշխարհի նկատմամբ, որն արտահայտվում է պատրաստակամությամբ, աշխարհի ճանաչմանը նպաստող գործնական կարողություններով, զանազան, երբեմն էլ անսպասելի, ոչ կանխատեսված հետազոտական արդյունքների ստացմամբ և հետագա ճանաչողական գործընթացում դրանց կիրառմամբ: Երեխան սովորում է դիտարկել, խորհել, համեմատել, կատարել եզրահանգումներ, պատասխանել հարցերին և այլն: Հետազոտական գործունեության արդյունքը ոչ միայն գիտելիքներն են, որոնք նա ձեռք է բերում, այլև ճանաչողական գործունեություն ծավալելու միջոցները, որոնք նպաստում են անձի մտավոր զարգացմանը: Հետազոտության խնդիրներն անպայման պետք է համապատասխանեն տարիքին և գտնվեն սովորողների մերձակա զարգացման գոտում, քանի որ հետաքրքրությունը աշխատանքի նկատմամբ և մատչելիությունը որոշում են աշխատանքի ընթացքը:

Հետազոտական գործունեության ընթացքում լուծվում է հետևյալ կարողությունների զարգացման խնդիրը:

. Ճանաչողական կարողություն

. տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու կարողություն

. գիտելիքներն ինքնուրույն կիրառելու կարողություն

Հետաքննության վրա հիմնված ուսումնառության փուլերն են՝

. Պլանավորում

. Որոնում

. Մշակում

. Ներկայացում

. Գնահատում

Հետազոտահեն ուսուցումը պատմական մտածողություն զարգացնելու խթան է: <<Պատմության հետախույզի>> գաղափարը շատ ազդեցիկ է դառնում: Զգալի արդյունքի կարելի է հասնել նաև անծանոթ աղբյուրների և անցյալի նյութական մշակույթի հետ աշխատելու միջոցով[14]:

Նման փորձ ընձեռում է 2020 թվականից Հովհաննես Թումանյանի թանգարանի կողմից իրականացվող <<Յոթը սարի ետևում >> գիտակրթական մրցույթ-փառատոնը:

Երկու անգամ իմ աշակերտուհու՝ Ա. Սարգսյանի հետ անհատական մասնակցություն ենք ունեցել մրցույթ-փառատոնին և արժանացել Ղևոնդ Ալիշան հատուկ մրցանակի՝ ամենահետաքրքրական և շարունակելի ուսումնասիրության համար ՝ << Առաջաձորի պատմամշակութային հուշարձանները >> և Հովսեփ Օրբելի մրցանակի՝ <<Գեղանուշի պատմամշակութային ժառանգությունը>> հետազոտական աշխատանքների համար:

Հետազոտահեն ուսումնասիրությունը բաժանվում է պասսիվ և ակտիվ փուլերի: Պասսիվ ուսումնասիրության ժամանակ փնտրվում և ուսումնասիրվում է ընտրված թեմայի հետ առնչվող գրականություն:

Ակտիվ ուսումնասիրության դեպքում կազմակերպվում են այցեր դեպի ընտրված հուշարձան, կատարվում լուսանկարներ ,գծագրեր, չափագրումներ ,վիմագիր արձանագրությունների վերծանություններ ,գրի առնվում հուշարձանի հետ կապված ավանդությունները, լեգենդները, առասպելները, պատմությունները, դեպքերը և իրադարձությունները, հիշողությունները;

Հետազոտողը կազմում է դաշտային ուսումնասիրությունների օրագիր, ստեղծում սահիկահանդես, հեռավար հարթակում շփվում տարբեր մասնակիցների հետ, ներկայացնում իր հետազոտական աշխատանքը, ձևավորում պատմական մտածողություն , սեր ու հարգանք տածում անցյալի մշակութային հուշարձանների հանդեպ:

Նյութական մշակութային ժառանգության ուսումնասիրության համար ներկայացվում է հուշարձանի ուսումնասիրության ներկայացման ձևաչափ: (տես հավելվածում)

Հավելված

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ՝

[14] Գիրք պատմության ուսուցման. Ինչու՞, ինչպե՞ս ,<<Պարադիգմա>> կրթական հիմնադրամ,2020, էջ 20

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ՁԵՎԱՉԱՓ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ /Ներկայացվում է աշխատանքի կառուցվածքը/

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ - մինչև 3 էջ / ներկայացվում է աշխատանքի կարևորությունը /

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ / ներկայացվում է հուշարձանը, նրա առանձին շինությունները, հատվածները, մի քանի հուշարձանից բաղկացած հուշարձանի դեպքում ներկայացվում են հուշարձանները մեծից փոքր կամ ըստ թվագրության՝ վաղ կառուցվածից ուշ հերթականությամբ: տեղադրվում են նաև հին լուսանկարներ, գծագրեր, չափագրություններ և այլն: Հնագիտական հուշարձանի դեպքում կատարված պեղումները, կարևոր, նշանակալի գտածոները, դրանց լուսանկարները, գծանկարները/

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ /ներկայացվում են հուշարձանում, նրա շրջակայքում առկա վիմագիր արձանագրությունները, մասնակիցների կողմից դրանց արտագրում/արտանկարումը,/

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ / ներկայացվում են հուշարձանի հետ կապված ավանդությունները, լեգենդները, առասպելները, պատմությունները, դեպքերը և իրադարձությունները, հիշողությունները/

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ/ ներկայացվում են հուշարձանի տարածքում մասնակիցների կատարած աշխատանքները՝ գծագրեր, հատակագծեր, լուսանկարներ, չափումներ և այլն/

ՎԵՐՋԱԲԱՆ /Ամփոփվում է աշխատանքը՝ ըստ կետերի ամփոփ ձևով ներկայացվում աշխատանքը/- մինչև 5 էջ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ / ներկայացվում է օգտագործված գրականությունը, աղբյուրները, և այլն:

ՍԲ Հռիփսիմե (գործող) եկեղեցի 1870թ.



Ա. Սարգսյանը՝ Գեղանուշի սբ. Հռիփսիմե եկեղեցին չափագրելիս:



Սբ Հռիփսիմե չգործող եկեղեցի Գեղանուշ

Տապանաքար



Այս է տապան մզկիթեցի Դավիթի որդի ոսկերիչ Դադայի. 1808թ.

Գեղանուշի գերեզմանատուն (17-19-րդ դդ)


Հանգած եկեղեցու,մոտ10-13-րդ դդ.

Գեղանուշի կամարակապ <<նավը>> 1912թ.

Տեր Ղևոնդ քահանա Ավագյանի տան հնությունները

Տեր Ղևոնդ քահանա Ավագյան

Սավադի ջրաղացը (19-րդ դարի վերջ, 20-րդ դարի սկիզբ)

Նժդեհի զինակից, ղափանյան ուժերի հրամանատար Գերասիմ Աթաջանյանի տունը

Նկար 2. Առաջաձորի Սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու չափագրություն և հատակագիծ՝ արված իմ ձեռքով: (Ա. Սարգսյան)



«ՅՈԹԸ ՍԱՐԻ ԵՏԵՎՈՒՄ» հայրենաճանաչողական-գիտակրթական մրցույթ-փառատոն
Էլ.փոստ՝ competitionfestival@gmail.com / հեռ.՝ (010) 560021 / Ֆեյսբուքյան խումբ

Նկար 6. Սբ Ստեփանոս եկեղեցու մոտ դրված անվանի մարդկանց տապանաքարերը:
Լուսանկարը՝ Ա.Սարգսյանի:

Առաջաձորի սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցի

Վարսենիկի մատուռ և դամբարան

«ՅՈՅԵՐ ՍԱՐԻ ԵՏԵՎՈՒՄ» հայրենաճանաչողական-գիտակրթական մրցույթ-փառատոն
էլ.փոստ՝ competitionfestival@gmail.com / հեռ.՝ (010) 560021 / Տեսաբուլյան խումբ

Դավելված 2.

Նկար 1. Վարսենիկի մատուռի չափագրություն և հատակագիծ՝ արված իմ ձեռքով: (Ա.Սարգսյան)



Հավելված 3.

Նկար 1. Սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու հարավային պատին ագուցված արձանագրությունը Լուսանկարները՝ Ա.Սարգսյանի:

...ԱՐ

ԸՍՏԵՓԱՆՈՍ

ԵԿԵՂԵՑԻՍ

ՈՐՍԳԱՆԱՑ

ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԳԵՈՐԳ

1838

Պատմության ուսուցչուհուս կարծիքով չերևացող բառը կարող է լինել շինեցան:

Եզրակացություն

Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը շաղկապված են կառուցողական կրթության հետ: Հետազոտահեն կրթությունը ենթադրում է սովորողների գործուն մասնակցություն դասագործընթացին: Այսպիսի մոտեցումն ապահովում է գործունեության ճանապարհով առարկայական գիտելիքների ձեռքբերում, որը նպաստում է քսանմեկերորդ դարի մարդուն անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը: Հետազոտահեն ուսուցման նշույլները, գտնվելով անտիկ աշխարհում, լայնորեն տարածվել են հայ և օտարազգի մտածողների աշխատանքներում՝ հանդիսանալով սովորողների ինքնուրույնությանը նպաստող և արդիական կրթական միջավայրի ստեղծման նախապայման: Ուսուցման հետազոտահեն մեթոդները հանդիսանում են պատմական ակտիվ մտածողության խթան, սովորողի մոտ ձևավորելով նոր կարողություններ և հմտություններ, ձևավորելու վկայություն՝ հետազոտական աշխատանքում բացահայտումներ կատարելու միջոցով, որը հիմնված է իր իսկ կատարած փորձառնությունների վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր 2/2021, Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը ,224 էջ;

2. Գիրք պատմության ուսուցման. Ինչու՞, ինչպե՞ս ,<<Պարադիգմա>> կրթական հիմնադրամ,2020, 295 էջ:

3. Դայան Ս.Ծ., Աշխարհագրական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունները Արևմտյան Հայաստանի դպրոցներում 19-րդ դարի 2-րդ կեսին, Ատենախոսություն, Եր., 2012, 126 էջ :

4. Դավիթ Անհաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք/ Համավահավաք քննաան բնագրեր և առաջաբանը Ս.Ս. Արևշատյանի, խմբ. Գ.Հ. Գրիգորյան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 340 էջ :

5. Դիստերվեգ Ա., Մանկավարժական ընտիր երկեր, - Եր.: «Հայպետուսմանկհրատ», 1963,490 էջ:

6. Կոմենսկի Յ.Ա., Մեծ դիդակտիկա, Եր., «Զանգակ97», 2010, 432 էջ:

7. Մովսիսյան Ա.Խ., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10-15 րդ դարեր), Եր., Հայպետուսմանկհրատ, 1958, 527 էջ :

8 Սարգսյան Ա.Մ., Մանկավարժական տեխնոլոգիաների կիրառությունը որպես մաթեմատիկայի դասավանդման արդյունավետության, 150 էջ:

9. Սիմոնյան Ց. Ռ., Հայ մանկավարժության պատմություն, Եր., Մանկավարժ, 2006,264 էջ:

10. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, - Եր., «Հայպետհրատ», 1949,284 էջ: